

«Ես հիշում եմ այդ երեկոն, քաղաքների կրակները և դաշտի վրա իջնող գիշերը, Ջյանբերդի ներքևի կտուրի վրա տեսնում եմ մի մարդու, թիկունքը դեպի ինձ՝ դեպի լեռան գագաթը, երեսը դաշտի կողմը, և լսում եմ լեռան գյուղերի ամենալավ մարդու նվազը»:

Ո՞ւմ ավելի, քան Ակսել Բակունցին՝ իրեն, կարելի է որակել նույն խոսքերով. «լեռան գյուղերի ամենալավ մարդը»:

Ամեն անգամ, երբ ես վերհիշում եմ անմոռանալի Ակսելին, ես նրան տեսնում եմ ահա այդպես կանգնած, ահա այդպես իր հոգու երգը հնչեցնելիս, որովհետև նա է մեր լեռան գյուղերի ամենալավ մարդը՝ Բազմադարյան հայ գրականության մեջ:

Տարբեր են լինում անձնական կենսագրությունները և տարբեր են լինում գրական կենսագրությունները: Չանդրադառնանք դրանց օրինաչափություններին կամ «անօրինաչափություններին»: Վերհիշենք միայն, որ Բաֆֆին, Շիրվանզադեն, Նար-Դոսը, Մուրացանը տասնամյակներ շարունակ շողում էին մեր գրականության մեջ որպես հզոր խարույկներ, Գրիգոր Զոհրապը երկինք խոյացավ բազմերանգ հրավառության պես, պլպլաց և հանգեց Թվատինցու կանթեղը: Իսկ Ակսել Բակունցը փայլատակեց և անցավ ասուպի պես: Սակայն մեր շլացած աչքերի առաջ մենք մինչև հիմա էլ տեսնում ենք մեր գրական երկնակամարում թողած նրա կորագիծը և դեռ կտեսնենք երկար ժամանակ — ըստ երևույթին այնքան, որքան որ գոյություն կունենա գրականությունը:

Պետք է կարդալ Բակունցին, կարդալ մի անգամ, երկու, երեք: Եվ եթե ոմանք չկախարդվեն նրանով, թող կարդան չորրորդ անգամ, հինգերորդ, տասերորդ, մինչև որ հասնեն նրան զգալու, նրա երկերով ապրելու բարձր հաճույքին: Եվ եթե ուզենաք իմանալ, թե ինչու Բակունցը ոմանց հոգուն չի հասնում առաջին իսկ ընթերցումից, պատճառը որոնեցեք ոչ թե նրա երկերում, այլ ընթերցողի հոգու մեջ, որը երբեմն չորացած ու կարծրացած է լինում կյանքի հանգամանքներից, և որը պետք է ոռոգվի ու ջերմանա բարձր արվեստի, բարձր գրականության ծաղկափթիթ գարունքով:

Ինձ համար դժվար է գրել Բակունցի մասին: Եթե ուրիշների համար նա սքանչելի գրող է և թախճոտ աչքերով նրանց նայող լուսանկար, ապա ինձ համար և նրա այլ մերձավոր ընկերների՝ նաև մեր Ակսելն է, գրական զինակից և կենցաղային բարեկամ, նստած քառակողմ այն սեղանի շուրջը, որի մյուս կողմերում նստած էին մեր հանճարեղ բանաստեղծ Եղիշե Չարենցը, ես և բանաստեղծ ու արձակագիր Գուրգեն Մահարին:

Երբ 1925 թվին սկսվեց Չարենցի, Մահարու և իմ գրական և անձնական սերտ բարեկամությունը, սեղանի չորրորդ կողմը դեռևս բավական ժամանակ ազատ էր: Ակսելը, որ գրական կյանք էր մտել նույն այդ տարիներին, դեռ որոշ ժամանակ որպես անձնավորություն անձանոթ էր մեզ: Թերթերում սկսվել էին տպագրվել նրա ակնարկները, ակնարկ-պատմվածքները և ապա արդեն պատմվածքները, որոնք մենք հավանել էինք՝ դեռ առաջին ակնարկից սկսած: Շատ ժամանակ

հարկ չեղավ՝ նրան սիրելու համար, առավել ևս՝ զգալու, որ խորհրդային հայ գրականությունն այլևս անհնար է պատկերացնել առանց Ակսել Բակունցի: Եվ 1927 թվին, իր հաստատուն մուտքի հետ՝ մեր գրականության մեջ նա դարձավ նաև մեր, և առաջին հերթին Եղիշե Չարենցի անձնական բարեկամը:

Ակսել-գրողի մասին դեռ երկար կգրեն գրականագետներն ու քննադատները: Ակսել-մարդու մասին պատմելու դժվար և պատասխանատու պարտքը ծանրացած է մեզ վրա՝ նրա մերձավոր ընկերների: Պետք է ունենալ, սակայն, Ակսելի իր վրձինը՝ կենդանի գույներով նկարելու այն երազկոտ զանգեզուրցուն, որն իջել էր հայրենի լեռներից, որպեսզի տասը կարճատև տարիների ընթացքում բարձրանար մեր նոր գրականության Արարատը:

Ակսելը բարձրահասակ էր, առնական դիմագծերով, որոնք, սակայն, նրա հոգու ներսից ճառագված էին մեծ տաղանդի և երազկոտ խառնվածքի մեղմ փայլով: Ամենահասարակ խոսակցությունն անգամ նա ընդունակ էր վարել այնպես, որ հասարակը դառնում էր նշանակալից, առօրյան ու նյութականը՝ մեծ և ռոմանտիկ: Նա տարվում էր և իր հետ տանում ունկնդիրներին: Այդ բուպեներին պետք էր նայել Չարենցի դեմքին: Բնչպե՞ս էր լսում նա Ալեքսանին — այդպես էր նա անվանում Ակսելին: Ինքը ոչ պակաս հոգու կախարդ, կլանվում էր նրա մեղմ ու երազկոտ ձայնով, պարզ պատմությամբ, որն Ակսելն անում էր առանց սեթևեթության, իսկական հուզմունքով, բայց միաժամանակ հանդարտասահ: Նա այդպես կարող էր խոսել ամեն ինչի մասին՝ և՛ հայոց պատմության, և՛ մարդկության ապագայի, և՛ հայկական բնաշխարհի, և հասարակ մարդկանց... Եվ երբ նա ավարտում էր, մենք երեքս դեռ որոշ ժամանակ նստած էինք մնում՝ նրա պատմության տպավորության տակ: Ապա Չարենցը գլուխն էր ցնցում՝ կարծես թոթափելու համար իրենից նրա կախարդանքը, և ժպտում էր քթի տակ՝ զարմանալով Ակսելի պատմելու ընդունակության վրա:

Բայց Ակսելը միայն երազկոտ ռոմանտիկ չէր: Նա ուներ նաև կայծկլտուն սրամտություն: Լինելով նաև որսորդության սիրահար, նա իր պատմությունները հաճախ ավարտում էր անտառի բնակիչների, մանավանդ արջերի կյանքից վերցրած այնպիսի դեպքերով, որ մեր երեքի բարձր ծիծաղը ցրում էր երազկոտ ու խաղաղ մթնոլորտը: Իսկ Ակսելն ինքը միայն ժպտում էր իր զարմանալիորեն գեղեցիկ և նույնքան վարակիչ ժպիտով, կամ ծիծաղում էր ժլատ ու կարճ հատվածներով, ճիշտ ինչպես նա գրում էր իր պատմվածքները:

Մենք երեքս տաքարյուն էինք և բավական անհավասարակշիռ: Ակսելը, ոչ պակաս բուռն հույզերի և զգացմունքների տեր, հավասարակշռված էր և ինքն իրեն տիրապետող: Երբեմն, երբ Չարենցը, օրինակ, շարադրելով մեր գրական-կազմակերպչական որևէ գործի ծրագիրը, հասնում էր որոշ չափազանցության, հանկարծ լսվում էր Ակսելի հանգիստ ձայնը: Միանգամայն լուրջ դեմքով նա առաջարկում էր, օրինակ, գրական դիսպուտի երեկոյան հափշտակել մեր հակառակորդ գեկուցողին, փախցնել, պահել մինչև առավոտ և այդպիսով խափանել նրա ելույթը մեր դեմ: Չարենցը զարմացած ու հարցական նայում էր Ակսելի անդրդվելի դեմքին, աշխատելով հասկանալ, թե լո՞ւրջ է ասում արդյոք նա, միաժամանակ կշռում էր մտքում, թե որքա՞ն խելքի մոտիկ է այդ առաջարկը: Ապա, նկատելով լուռ ծիծաղն Ակսելի աչքերում, միաժամանակ ինքն էլ անդրադառնալով նրա ասածի արտառողջությանը, պայթում էր միանգամից.— «Եղբայր, մենք այստեղ լուրջ գործ ենք անում, իսկ դու վերածում ես կատակի»...

Բայց Ակսելը կատակի էր վերածում ոչ թե հանուն կատակի, այլ հունի մեջ դնելու համար մեր քննության առարկա գրական գործը, անելիքը:

Մեր գրական թանգարանում, Չարենցի թղթերի մեջ, պահպանվել է նրա մի հետաքրքիր դիտողությունը: Չարենցը գրում է.— «Մեր քառյակի ներսում համակրանքները բաժանվում էին

այսպես՝ Չարենց — Արմեն, Բակունց — Մահարի»։ Իհարկե, խիստ պայմանականորեն կարելի է խոսել որևէ «բաժանման» մասին, որովհետև մեր չորսի բարեկամությունը սերտ էր և անվերապահ։ Բայց եթե կարելի է խոսել որևէ «բաժանման», ավելի ճիշտ՝ «բաժանքի» մասին, ապա, իհարկե, Մահարուն հասել էր նրա համար այնքա՛ն անհրաժեշտ բաժինք՝ Ակսելն իր հավասարակշռությամբ ու լրջախոհությամբ։

Չարենցի բնակարանը, թե Նալբանդյան—Կնունյանց փողոցների անկյունում, թե հյուրանոցում և թե, մանավանդ, Լենինի պողոտայի և Սպանդարյան փողոցի անկյունում, մեր ինտելիգենցիայի և մասնավորապես գրականության ու արվեստի մարդկանց հավաքավայրն էր, սալոնը։ Այնտեղ կարելի էր տեսնել համարյա մեր բոլոր այն ժամանակակիցներին, որոնց անուններով այսօր պարծենում է մեր ժողովուրդը։

Բայց, Չարենցի բնակարանը, բոլորի համար լինելով գրական ու կուլտուրական կյանքի կիզակետ, մեզ համար, նրա մերձավոր ընկերների, նաև մեր ավագ ընկերոջ տունն էր, որտեղ մենք լինում էինք համարյա ամեն օր։ Իսկ կարելի՞ էր արդյոք մեր հանդիպումները պատկերացնել առանց Ակսելի։ Բայց, իրոք, հաճախ էր պատահում, որ բացակայում էր։ Այդ նշանակում էր, որ նա Երևանում չէր։ Իր աշխատանքի բերումով— իսկ նա գյուղատնտես էր— նախասիրության բերումով— իսկ նա որսորդ էր— իր խառնվածքի բերումով— իսկ նա գյուղացիության ամենալայն խավերի հետ կապված մարդ էր— նա հաճախ էր լինում Հայաստանի զանազան շրջաններում։ Այդպիսի օրերին մենք խիստ սուր էինք զգում նրա բացակայությունը մեր ռեալ և փոխաբերական քառակողմ սեղանի շուրջը։ Իհարկե, մենք և զրուցում էինք, և վիճում, և ծիծաղում, բայց այդ բոլորը ոչ լրիվ, այլ միայն երեք քառորդով։ Եվ ահա, որքան մեծ էր լինում մեր ուրախությունը, երբ ներս էր մտնում Չարենցի Ալեքսանը՝ բերելով իր հետ բազմաթիվ նորություններ և հուզիչ կամ զվարճալի պատմություններ Հայաստանի զանազան անկյուններից, ժողովրդի խորքերից։ Ինչ խոսք, որ Ակսելը շատ ավելի լավ գիտեր գյուղացիական Հայաստանը, քան մենք երեքս՝ միասին վերցրած։ Ժողովրդի ճանաչողության հարցում միայն մի դեպքում մենք չէինք զիջում միմյանց, այլ լրացնում էինք իրար։ Մեզանից յուրաքանչյուրը հավասարապես լիակատար գիտեր իր ծննդավայրը։ Չարենցը՝ Կարսը, Բակունցը՝ Գորիսը, Մահարին՝ Վանը և ես՝ իմ ջերմորեն սիրելի Լենինականը։

Ես այդ տարիներին նույնպես ապրում էի Սպանդարյան փողոցի վրա, Չարենցի բնակարանից ոչ հեռու։ Աղասի Խանջյանի բնակարանի ճանապարհին անցնում էր մեր փողոցով։ Չարենցն ու Ակսելը հաճախ էին միասին գնում նրա մոտ, իսկ վերադառնալիս շատ անգամ բարձրանում էին իմ սենյակը և մենք, երկար ժամեր, զրուցում էինք գրականության մասին կամ, ընդհակառակը, ոչ մի խոսք չէինք արտասանում այդ մասին և բոլորովում էինք բաց արված սեղանի շուրջը, բարկանալով Մահարու վրա, թե ինչու նա ամեն անգամ չէ, որ ներս է մտնում պատեհ ժամին՝ լրացնելու համար չորրորդ կողմը։ Եվ եթե դա տեղի չէր ունենում, ապա մենք ինքներս էինք գնում փնտրելու նրան, ինչպես փնտրում էինք մեզանից յուրաքանչյուրին, եթե չէինք տեսնում մի երկու օր։

Թող տարօրինակ չթվա ոչ ընթերցողների, ոչ էլ, մանավանդ, քննադատների համար, որ Չարենցի, Բակունցի, Մահարու և իմ անունները, այնքան տարբեր՝ թե իրենց արժանիքներով, թե այդ արժանիքների բնույթով, մեր անձնական հիշողությունների մեջ դրվում են կողք կողքի։ Բայց անձնական բարեկամության մեջ հավասար կարող են լինել ոչ միայն հավասարները, այլև վարպետն ու աշակերտը, ավագն ու կրտսերը, հանճարեղն ու շնորհալին։ Երբ Երևանի անգուգական մաճառից հետո մեր հուզված կվարտեսը փորձում էր երգել, միշտ չէ, որ կարելի էր հիշել, որ երկու, ծիծաղելիորեն աններդաշնակ բաղաձայն, ձայներից մեկը պատկանում էր մեր մեծագույն բանաստեղծ Եղիշե Չարենցին, իսկ մյուսը ձեր խոնարհ ծառա Մկրտիչ Արմենին։

Ինչէ՛ր չեն լինում ընկերության մեջ՝ և՛ ծիծաղ, և՛ տխրություն, և՛ հուզմունք, և՛ բարկություն, նույնիսկ իրարից խռովել: Պատահում էր դեպք, երբ դու, նեղացած, մի քանի օր չէիր ուզում տեսնել Չարենցին: Ինչ իմանայիր այն ժամանակ, որ կգա մի օր, երբ դու պատրաստ կլինես շատ օրեր տալ քո կյանքից, գեթ մի անգամ ևս, գոնե մի լուրջ, տեսնելու համար կենդանի Չարենցին և կենդանի Ակսելին:

Որքան էլ որ չորսով մերձավոր ընկերներ և գրական զինակիցներ, ես և Մահարին ամեն լուրջ գգում էինք ու գիտակցում, որ Չարենցն ու Բակունցը շողշողուն լուսատուներ էին մեր գրականության մեջ: Իսկ ինչո՞ւ միայն մենք. չի կարելի անվանել որևէ մարդու՝ լինի ակադեմիկոս թե բեռնակիր, երկրպագու թե հակառակորդ, որը, խոսելով նրանց հետ գոնե մի քանի լուրջ, չտեսներ, որ գործ ունի արտակարգ գրողի և արտակարգ մարդու հետ:

Թափուր թողնելով մեր անձնական քառակողմ սեղանը, Չարենցն ու Բակունցը պատվավոր տեղեր են գրավել մեր հայ գրականության մեծ սեղանի շուրջը: Եվ ես չեմ կարող ասել Բակունցի մասին ավելի լավ, քան իր իսկ խոսքերով.

«Մի վիթխարի ծիրանի փող, առանց հին ահի ու նոր խնդությամբ հնչեցնում է մեր արդար երգերը»:

2

Ոչ թե դժվար, այլ անհնար է հուշերի մի փոքրիկ պատառիկի մեջ տալ Չարենցի, որպես մարդու, կերպարի թեկուզ և ամենաթուղթիկ պատկերը: Չարենցը բազմակողմանիորեն հետաքրքիր և ուսանելի մարդ էր և նրա մասին հարկավոր է գրել շատ ավելի ընդարձակ. մի բան, որը ես սկսել եմ կատարել վաղուց ի վեր և հույս ունեմ շուտով ավարտել:

Հետաքրքիր և ուսանելի է, արժեքավոր և բացառիկ է ոչ միայն Չարենցի ստեղծագործությունը, այլև կյանքն ու հասարակական գործունեությունը: Տարիների և տասնամյակների ընթացքում մեծ բանաստեղծի անվան ու անձնավորության շուրջը կուտակվել են շատ լեզենդներ և, Դոստոևսկու խոսքերով ասած, «գեշ անեկդոտ»-ներ: Չարենցի մերձավոր ընկերների, այդ թվում նաև իմ պարտականությունն է՝ գտել ճիշտն անճիշտից, վեր հանել իսկական Չարենց-մարդու կերպարը:

Չարենցի հետ ես ծանոթացա արտասահմանյան ճանպարհորդությունից նրա վերադառնալուց անմիջապես հետո, 1925 թվի հուլիսի 31-ին: Մենք շատ շուտով մտերմացանք և, տասներկու տարի շարունակ, մինչև նրա վախճանը, մնացինք ամենամտերիմ բարեկամներ:

Չարենցն ընդհանրապես ուներ ծանոթությունների լայն շրջանակ: Ավելի ճիշտ ասած, նրա հետ ծանոթ էին շատերը, հատկապես մեր ինտելիգենցիայից: Բայց եթե գծելու լինենք մեծ բանաստեղծի երկարամյա և ամենամտերիմ ընկերների շրջանակը, ապա դա, բնականաբար, այնքան էլ լայն չէր, այնտեղ մտնում էին քիչ մարդիկ, իսկ մասնավորապես գրական առումով՝ մի քանի հոգի— Բակունցը, Մահարին և ես:

Չարենցի սեփական կյանքում և մարդկանց հետ ունեցած նրա կապերի մեջ անձնականն ու հասարակականը, իսկ առաջին հերթին գրականը, կապված էին անքակտելիորեն: Ուստի և, չնայած այն հանգամանքին, որ նա ուներ նաև ուրիշ մտերիմ բարեկամներ, օրինակ՝ ճարտարապետ Մ. Մազմանյանը, նկարիչ Մ. Արուտչյանը և այլք, բայց և այնպես նրա ամենամտերիմները նրա գրող ընկերներն էին, նրա գրական զինակիցները՝ «Նոյեմբեր» միության և ապա «Նոյեմբեր» խմբակցության մեջ:

Չարենցի 30-ական թվականների ձեռագրերում կա մի փոքրիկ, բայց շատ հետաքրքիր պատատիկ, վերնագրված՝ «Նոյեմբեր»։ «Իմ հիմնական մոտեցումը՝ զուտ գրական-կրիտիքական մոտեցում», — ասում է նա այնտեղ։ Թվում է, թե սովորական, ոչ մի առանձին բան չասող նախադասություն։ Բայց դրա մեջ Չարենցն է ամբողջովին։ Հիրավի, բոլոր գրողներին, լինեին դրանք նրա մերձավորները, թե հակառակորդները, նա վերաբերվում էր անաչառորեն, «գրական-կրիտիքական մոտեցումով»։ Բազմաթիվ են այն դեպքերը, երբ նա հրապարակորեն, մեծ գովասանքով էր խոսում իր չսիրած որևէ հեղինակի հաջողված երկի մասին և, ընդհակառակը, նույնպիսի անվերապահությամբ դատապարտում էր իր բարեկամների թույլ երկերն ու վատ արարքները։

Նույն տեղում Չարենցի գրածն այն մասին, որ «սիմպատիաները «Նոյեմբերի կենտրոնական ուժերի միջև» բաժանվում էին «Չարենց— Արմեն» և «Բակունց—Մահարի», ինչ խոսք, որ բոլորովին չէր նշանակում որևէ խտրություն կամ վերապահություն մյուսների նկատմամբ։ Հանրահայտ է, մասնավորապես, Չարենցի ոչ միայն բարձր կարծիքն իր մեծ կուլեգա Բակունցի ստեղծագործության մասին, այլև նրանց երկուսի անձնական բարեկամությունը։

Մի շարք տարիներ, մինչև իր վախճանը, Չարենցն ապրում էր Լենինի պողոտայի և Սպանդարյան փողոցի անկյան շենքի երրորդ հարկում։ Ես ապրում էի նույն Սպանդարյան փողոցի վրա, մի քիչ ավելի վերև, և Չարենցն ու ես հանդիպում էինք ամեն օր, շատ սակավ բացառություններով։ Հանդիպում էինք գլխավորապես նրա տանը, ոչ սակավ նաև ինձ մոտ։

Չարենցն անչափ հաճելի մարդ էր, պարզ, հասարակ, շուտ մտերմացող և մարդկանց իրեն հետ շուտ մտերմացնող։ «Մարդկային ոչ մի բան խորթ չէր նրան», ներառյալ նաև նրա, թվում էր, թե «տարիքին», «անվանն» ու «հոչակին» անվայել երեխայական չարությունները։ Մի անգամ, օրինակ, նա, ես և Մահարին գտնվում էինք մի սենյակում։ Մահարին, սիրահարված, ամենայն երկյուղածությամբ ու պաշտամունքով սկսեց հեռախոսել իր սիրեցյալ աղջկա հետ։ Ես և Չարենցը բազմոցի վրա նստած, զրուցում էինք։ Հանկարծ Չարենցը հանեց իր կիսակոշիկները, որպեսզի ոտնաձայնը չլսվի, թիկունքի կողմից մոտեցավ ռոմանտիկ սիրահարվածին և հեռախոսի մեջ բղավեց մի... ինչպե՞ս ասեմ... մի ոչ տեղին բառ։ Ինքն էլ հրճվելով իր արարքից, ընկավ բազմոցի վրա, երեխայի պես վեր բարձրացրեց ոտքերը, սկսեց թափահարել օդում և անզուսպ քրքջալ։ Կասկարմիր կտրած մեր սիրահարը հագիվ կարողացավ թոթովել իր խոսակցուհուն՝ «Չարենցն էր», ապա, մի կերպ ավարտելով խոսակցությունը, հարձակվեց Չարենցի վրա, սկսեց հայիոյել նրան՝ դրանով ավելի սաստկացնելով նրա ծիծաղը։

Այո, մենք մտերիմ ընկերներ էինք՝ բոլոր մտերիմ ընկերների նման — թե՛ բարկանում էինք իրար վրա, թե՛ կատակում, թե՛ խռովում, «ձեռք առնում» իրար և այլն։ Բայց ոչ մի պահ մեզ չէր լքում այն գիտակցությունը, որ մեր ընկերը «մեր թայը» չէ, այլ՝ հանճարեղ Եղիշե Չարենցը։ Զարմանալի բան — Չարենցն ինքը բացարձակապես ոչինչ չէր անում՝ մեզ մոտ այդպիսի գիտակցություն վառ պահելու համար։ Պարզապես նրա ամբողջ էությունից ճառագում էր մեծ մարդն ու մեծ գրողը։

Բայց Չարենցը ոչ միայն մեր ընկերն էր, այլև ուսուցիչը։ Եվ այն էլ ինչպիսի՜ ուսուցիչ։ Ճիշտ է, այդպիսի ուսուցչին այսօր անմիջապես կազատեին աշխատանքից, իսկ այդպիսի գրական խորհրդատուի վրա Գրողների միությունն ամեն օր կստանար երիտասարդ ու սկսնակ գրողների վրդովված բողոքները։ Կոպտության հասնող անմիջականությամբ ու շիփշիտակությամբ նա անխնա քննադատում էր, ավելի ճիշտ ասած՝ ջախջախում, ոչնչացնում էր մեր գրվածքների ամենաթեթև թերություններն անգամ։ Տալիս էինք նրան, օրինակ, մեր գրած որևէ նոր բանաստեղծությունը։ Նա ազահ հետաքրքրությամբ ուղղակի խլում էր մեր ձեռքից, կարդում։ Ուշադիր հետևում էինք։ Օրորում էր գլուխը։ Չհավանեց... Ապա նորից էր աչքի անցկացնում՝

համոզվելու համար, որ չի սխալվել: Եվ սկսում էր... «Այ տղա, էս ի՞նչ զիբիլ ես գրել»... Կարդում էր մեր առանձնապես ձախողված որևէ տողը, կրկնում էր երկրորդ անգամ, երրորդ, զգվանքի արտահայտությունը դեմքին, մինչև որ լվեր անցնեին մեր մարմնով և մենք աղերսանքով նայեինք նրան՝ «խնայիր, բավական է»:

Բայց բավակա՞ն էր արդյոք: Ու թեև դու արդեն հասկացել էիր քո ձախորդությունը, բայց նա սկսում էր բացատրել՝ առանց ավստասալու իր ժամանակը, իր խոսքերը: Եվ ապա, շարտելու ձևով վերադարձնում էր գրվածքդ քեզ և դեռ բուրն ու ցուցամատն անզգայաբար քսում էր կրծքին՝ կարծես մաքրելու համար անտաղանդության կեղտից:

Եվ, զարմանալի բան— մենք ոչ միայն մազաչափ չէինք վիրավորվում նրանից, այլև չէինք զգում ոչ մի ծանրություն, վշտացածություն: Ընդհակառակը, նրա հետ միասին մենք էլ էինք սկսում ծիծաղել անհաջող բանաստեղծության վրա, որովհետև այժմ, նրա խոսքերից հետո, թվում էր, թե մի ուրիշն էր գրել դա, մի անշնորհ մարդ, իսկ դու ինքդ շնորհքով էիր, դրանից ավելի բարձր կանգնած: Եվ մի՞ թե, իրոք, այդպես չէր արդեն:

Մեր օրերում, երբ մեզանից շատերը դարձել են չափից ավելի քնքույշ և զգայուն՝ քննադատության հանդեպ, հաճախ կարելի է հանդիպել հեղինակներին ուղղված այսպիսի մակագրությունների կամ բանավոր խոսքերի.— «Ձեր նյութը հնարավոր չեղավ զետեղել», «դժբախտաբար չկարողացանք օգտագործել ձեր բանաստեղծությունը», «ձեր գրվածքը, չնայած իր զգալի հետաքրքրությանը, այնուամենայնիվ»... Չարենցի մոտ չկային այդպիսի ոլործուն, անողնաշար նախադասություններ: Ջարդել—ուրեմն այնպես ջարդել, որ հեղինակի մոտ կասկած անգամ չմնա:

Բայց, դրա դիմաց, որքա՛ն էր ուրախանում Չարենցը մեր ամեն մի հաջողությամբ, գովում՝ առանց վախենալու չափազանցություններից: Քանի՜-քանի անգամներ ենք մենք «գենիալնի», այսինքն՝ հանճարեղ որակվել նրա կողմից: Բայց ապա, թող փորձեինք մեծամտանալ, շփանալ: Մեր հաջորդ, անհաջող, գրվածքը կարդալիս Չարենցը մեզ ցույց կտար մեր ամբողջ «գենիալնիությունը»:

Քանի՜-քանի գրողներ Չարենցին են պարտական իրենց գրական նվաճումներով: Մեծ երջանկություն է՝ քո գրական «օրորոցի» մոտ ունենալ այդպիսի բարեկամ և ուսուցիչ: Բայց առավել ևս մեծ պատասխանատվություն և պարտք է դնում դա քո վրա: Մինչև այսօր էլ իմ մեջ չհաստուցած պարտքի զգացում են առաջացնում Չարենցի խոսքերն իմ մասին, ասված նրա այն ձեռագրում, որն այժմ պայմանականորեն անվանվում է «Օրագիր».

«Մեր երիտասարդ գրողներից ես ամենից շատ սիրում ու հավանում եմ Արմենին. թվում է, որ մեր նորագույն գրականության ամենաինքնուրույն և ամենալուրջ դեմքն է նա: Հիշում եմ նրա «մուտքը» Երևան... Նրա առաջին երկը, որ ես կարդացի՝ «Գազային երազն» էր: Կարդացի և զարմացա: Ոչ մի գրող իր առաջին քայլից այդքան ինքնուրույն չի եղել, որքան որ Արմենը: Եվ— բնորոշ է մեր իրականության համար— նրան ոչ միայն այն ժամանակ չնկատեցին իբրև մի արտառոց ուժ, մի երևույթ, այլ մինչև հիմա էլ չեն նկատում»:

Պարզ աչքով էլ կարելի է նկատել Չարենցի «բանաստեղծական չափազանցությունն» այս գնահատության մեջ: Մասնավորապես «Գազային երազ»-ի ինքնատիպության առյուծի բաժինն իմը չէր, այլ գերմանացի գրող Ադոլֆ Հիլֆերդինգի գեղարվեստական ակնարկինը, որի բանաստեղծական վերապատումն էր հանդիսանում իմ պոեմը: Մակայն, որքան էլ որ բացառենք չափազանցությունները, տակը կմնա այն, որ Չարենցն սպասելիքներ ուներ ինձանից և ես պարտավոր էի հուսախաբ չանել նրան:

Չարենցը բարձր կուլտուրայի մարդ էր: Բայց ոչ միայն կուլտուրայի, որը ձեռքբերովի հատկություն է: Նրա մեջ կար բնածին մի բացառիկ տաղանդ, գրականությունը նրա ոչ թե «կյանքի գործն» էր, այլ հենց կյանքը: Նա պաշտամունքի հասնող երկյուղածությամբ էր արտասանում Դանթեի, Գյոթեի, Հայնեի, Պուշկինի, Թումանյանի, Տերյանի և այլոց անունները, իսկ նկարներին նայում էր որպես սրբապատկերների: Ոչ, ես չեմ տեսել գրականությամբ այդքան ապրող ու շնչող մի ուրիշ այդպիսի մարդու:

Իսկ որքան աշխատասեր էր Չարենցը... Կան գրողներ, որոնք հետևում են «ոչ մի օր առանց գոնե մի տող գրելու» սկզբունքին: Դե ի՞նչ, նախասիրության, բնավորության, մանավանդ, գրականությունն ստեղծագործություն կամ աշխատանք համարելու հարց է դա: Չարենցը երկար ժամանակ ոչինչ չէր գրում և իր հերթական երկը կամ գիրքը գրում էր «մի ումպով»: Բայց արդյո՞ք պարապ էր մնացյալ ժամանակը: Եվ, ընդհանրապես, պարապ է արդյոք իսկական գրողը, երբ կարդում է կամ լռում, շրջում է ուրիշների հետ կամ մենակության մեջ անշարժ նստում և դիտում շրջապատը, կամ խորհում:

Բայց մինչև իսկ այդ իմաստով Չարենցն ազատ չէր, նա երկար տարիներ պաշտոնավարում էր՝ նախ որպես «Նորք» ավանախի պատասխանատու քարտուղար, ապա Պետական հրատարակչության գեղարվեստական բաժնի վարիչ: Իր վերոհիշյալ «Օրագրի» մեջ նա իսկական երջանկություն է համարում այն, որ ժամանակ է գտնում թեք ընկնելու բազմոցի վրա և Պուշկին կարդալու: Եվ տագնապում է, թե արդյոք իրավունք ունի՞ այդպիսի «պարապության» համար, երբ ուրիշ մարդիկ չարքաշ աշխատում են: Չարենցը գիտեր հասկանալ և գնահատել ուրիշի աշխատանքը:

Բայց եթե Չարենցի ամենագրադաված ժամին անգամ մտնեիր նրա մոտ, նա անմիջապես կիսատ կթողներ գործը, վեր կկենար և կգրադվեր քեզանով՝ որքան էլ երկար մնայիր նրա մոտ: Իսկ եթե չմոռանանք, որ նրա գործը շատ հաճախ այն էր, որ կերտում էր իր հերթական գրական կոթողը, ապա պարզ կլինի այն հանցանքը, որ կատարում էինք մենք՝ այդպիսի ժամանակ մտնելով նրա մոտ: Բայց եթե ասում էիր այդ մասին, նա ձեռքն էր թափ տալիս դեպի գրասեղանը՝ «ոչինչ, կարևոր գործ չէր»: Բայց հետո պարզվում էր, որ այդ «անկարևոր» գործը հայ գրականության գոհարներից մեկն էր...

Անմիջական ուսուցման հետ միասին, ինչպես հայտնի է, կա նաև հեռակա ուսուցում: Չարենցն այսօր ևս, մեր հեռակա ուսուցիչն է՝ տասնյակ տարիներով մեզանից հեռու գտնվող: Բայց մի թե դա տարածություն կամ ժամանակ է՝ աստղերի և հանճարների համար...

3

Երիտասարդությունը Չարենցի ստեղծագործության մեջ՝ դա մեծ և հետաքրքիր թեմա է, կարևոր թեմա: Բայց ես իմ անձնական հուշերի մեջ ուզում եմ անդրադառնալ Չարենց-մարդու վերաբերմունքին դեպի երիտասարդությունը:

Մեր մեծ բանաստեղծն արտակարգ, սակավ հանդիպող մի խոր հավատ և վստահություն ուներ դեպի երիտասարդության կենսական, ստեղծագործական ուժերը: 1925 թվին, նրա հետ իմ ծանոթանալու ժամանակ, նա հազիվ էր բոլորել իր կյանքի 28 տարին: Լինելով արդեն անվանի բանաստեղծ, մեր նոր գրականության ամենապայծառ ներկայացուցիչը, նա, այնուամենայնիվ, իրենից ավելի երիտասարդների նկատմամբ իրեն համարում էր «հին մարդ»: Գիտնական-

հոգեբանի ուշադրությամբ նա «ուսումնասիրում» էր իրեն հանդիպող ամեն մի երիտասարդի հոգեբանությունը, վարքագիծը, վերաբերմունքը դեպի կյանքի երևույթները, և եթե այդ երիտասարդը գրող էր, ապա նաև նրա անպաճույճ գրվածքները, համարելով, որ տարիքի բերմամբ նա գերծ է հին աշխարհի ազդեցություններից ու անցանկալի տրադիցիաներից, որոնցից գերծ չենք «մենք՝ հներս»: Նա առիթը չէր փախցնում շփվելու երիտասարդության հետ, լինելու երիտասարդների շրջանակում:

Ես, Վահան Գրիգորյանը և ուրիշներն այն ժամանակ խիստ երիտասարդ էինք՝ ոչ միայն տարիքով, այլև մեր դեռ անփորձ ոտանավորներով: Սակայն հայտնի է Չարենցի հիացմունքը Վ. Գրիգորյանի «Անիվ իմ դարձիր» ոտանավորով, որի մեջ նա տեսնում էր ապագա գրականությանը հատուկ ձևի ու մտքի պարզություն, գերծ՝ ինտելիգենտական բարդացումներից, հին գրականությանը հատուկ «խորհմաստացումներից»: Իսկ երբ նա կարդաց իմ նույնքան պրիմիտիվ «Էպիկաները»՝ կոմերիտական կենցաղի թերի կողմերի մասին, ապա ոչ միայն հավանեց, այլև շարունակ կրկնում էր, որ ես գտել եմ միանգամայն ինքնուրույն ձև: Հարկ եղավ, որ ես ինքս նրա ուշադրությունը հրավիրեի այն բանի վրա, որ այդ «ինքնուրույն ձևը» գալիս է հենց իրենից, Չարենցից:

Չարենցի սերն ու հավատը դեպի երիտասարդությունը վարձատրվում էին նույն այդ երիտասարդության փոխադարձ վերաբերմունքով: Բոլորը սիրում էին Չարենցին, նրա ժողովրդականությունն իր նախընթացը չունեի մեր գրականության պատմության մեջ: Երբ 1925 թվի վերջերին մենք գնացինք Լենինական և եղանք նաև Պոլիգոնում, այնտեղ ապրող որբ պատանիները չտեսնված խանդավառությամբ դիմավորեցին բանաստեղծին և Չարենցը դադարեց ոտքով քայլելուց: Նրան, բառի բուն իմաստով, տարան ձեռքերի վրա և այդպես էլ մոտեցրին շենքին, բարձրացրին երկրորդ հարկ, մտցրին դահլիճ, որտեղ կազմակերպված էր նրա հանդիպումը «որբության» հետ:

Չի կարելի ասել, թե Չարենցի այդպիսի վերաբերմունքը դեպի երիտասարդությունն «անքննադատ» էր և նա ընդունում էր երիտասարդության ամեն ինչն անխտիր: Դժբախտաբար, միշտ էլ եղել են ու կան որոշ թվով մարդիկ, այդ թվում նաև երիտասարդներ, որոնք խախտում են ընդհանուր և բնորոշ պատկերը, ներդաշնակությունը: Չարենցն այդպիսիների նկատմամբ դադարում էր սովորող լինելուց և դառնում էր խստաբարո դաստիարակ և ուսուցիչ: Մի անգամ, ինչ-որ գրական երեկույթում, ելույթ ունեցավ մի կոմերիտական և սկսեց Չարենցին տալ «դասակարգայնության» տարրական դասեր... Չարենցն իր ելույթի մեջ նրա հասցեին ասաց շատ կարճ, բայց երկար տարիներ որպես թևավոր մնացած իր խոսքը.— «կան կոմերիտականներ, որոնք հեղափոխության սկիզբը հաշվում են կոմերիտության մեջ իրենց մտնելու օրվանից»: Դահլիճը բռնո՞ն ծափահարությամբ ու ծիծաղով հավանություն տվեց բանաստեղծի տեղին նկատողությանը:

Ինչպես հայտնի է, Չարենցը կազմել և հրատարակել է դասագրքեր՝ մեր դպրոցների համար: Իմ տասներկու տարվա մտերմության ընթացքում մեր մեծ բանաստեղծի հետ, ես չեմ տեսել, թե իր որևէ նոր երկն ստեղծելիս նա այնքան տքներ, որքան որ այդ դասագրքերի վրա: Պատասխանատվության զգացումը նրան մինչև իսկ դրդում էր կիսատ թողնել և հրաժարվել դա շարունակելու մտքից: Բայց հետո նա մի նոր եռանդով նորից ձեռնարկում էր աշխատանքի:

Չնայած այն ժամանակներում գոյություն ունեցող մի շարք թյուր հասկացողություններին՝ կենցաղի մասին, Չարենցը երբեք չէր կորցնում հեռանկարը դրա նկատմամբ: Սակավ չէին դեպքերը, երբ կոմերիտականի համար «դասակարգային անվայել արարք» էր համարվում սիրահարվելը: Ոմանք մինչև իսկ առաջ էին գնում և ամուսնության փոխարեն քարոզում էին «ազատ կենցաղ»: Չարենցը ոչ միայն կտրուկ դատապարտում էր այդպիսի անհեթեթությունները, այլև ամուսնությունը

համարում էր երիտասարդության բարոյական կերպարը կազմակերպելու և կենցաղը նորմալավորելու մի ընդհանուր գործոն և ոչ թե միայն «սիրային հարցը լուծելու» միջոց:

Հիշում եմ, թե ինչպես մեր «Նոյեմբեր» միության մեջ պիտի ընդունեինք Լյուսի Թարգյուլին: Հավաքվեց ընդհանուր ժողով, սպառնացին օրակարգի բոլոր հարցերը, իսկ Լյուսին դեռ չկար... Չարենցը, որ սիրում էր ճշտապահություն, զայրացավ և մենք ժողովը շուտով փակեցինք: Հաջորդ օրը, երբ անցնում էինք Աբովյանով, տեսանք Լյուսիին: Չարենցը, որը հարկ եղած դեպքերում չէր տառապում քաղաքավարությամբ, ուղղակի հարձակվեց Լյուսիի վրա.

— Երեկ ինչո՞ւ չեկար ժողովի, ի՞նչ խաբար է:

— Ձագս էի գնացել...— կմկմաց Լյուսին և գլխով ցույց տվեց իր ուղեկցին:

Չարենցը չկարողաց այն ժամանակ մոդայի մեջ գտնվող ճառերից մեկն այն մասին, թե նախ հարկավոր է հասարակական գործերը կարգավորել և ապա անձնականը և այլն և այլն, այլ իսկույն տեղի տվեց հարգանքով, սեղմեց Լյուսիին անպարտաճանաչության դրդած երիտասարդի ձեռքը և մենք հետևեցինք նրա օրինակին:

«Նոյեմբեր» միության և Աստղիացիայի միացումից հետո, երբ մենք դժգոհ էինք այդ միացյալ նոր միությունից, Չարենցը և ես միտք հղացանք մի գրական նոր պարբերական հրատարակել Թբիլիսիում, որն այն ժամանակ անդրկովկասյան ֆեդերացիայի մայրաքաղաքն էր, և պարբերականի շուրջը հավաքել գրական կենսունակ ուժերին: Որոշեցինք իսկույն փոխադրվել Թբիլիսի: Ես մեկնեցի, իսկ Չարենցն սկսեց հավաքատել իրերը և պետք է գար մի քանի օր հետո:

Մի օր հետո, սակայն, ես նորից «ծլեցի» Երևանում... Չարենցը սոսկալի զայրացավ: Ես վիժեցնում էի ծրագրված գրական գործը, ես անկարգ էի, անկազմակերպ... Սրանք դեռ ամենամեղմ բառերն ու որակումներն էին:

Ես հազիվ կարողացա վայրկենական ընդմիջում գտնել Չարենցի հանդիմանությունների հեղեղի մեջ և ասել.— «Ես ամուսնացա»... Չարենցը մի ակնթարթում հանգստացավ և ոչ միայն ներեց ինձ, այլև գտավ, որ ես վարվել եմ միանգամայն ճիշտ:

Չարենցը խիստ նախանձախնդիր էր երիտասարդության կրթության նկատմամբ: Մեծ բանաստեղծը սարսափելի չէր սիրում տգետ մարդկանց, ովքեր գիտության պակասը լրացնում էին դատարկ ֆրազաբանությամբ:

Կարող է հարց ծագել, թե իսկ ո՞վ էր դա սիրում: Ճիշտ է, բայց դա միայն այսօր: Իսկ այն տարիներին բավական հաճախ կարելի էր հանդիպել այնպիսի մարդկանց, երիտասարդների, որոնք թերագնահատում էին գիտելիքները, համարելով, որ դրանք անմիջական կապ չունեն նրա հասարակական աշխատանքի հետ: Ինչպես հայտնի է, Ակսել Բակունցն ուներ գյուղատնտեսական բարձրագույն կրթություն: Չարենցը միշտ օրինակ էր բերում նրան, ինչպես և բժիշկներ Չելտովին ու Վերեսանին և շատ ուրիշներին, որոնց մասնագիտությունները, արտաքնապես այնքան հեռու գրականությունից, իր ժամանակին օգնել էին նրանց՝ ձեռք բերելու կյանքի փորձ, հետևաբար և հաստատելու գրականության հիմքերի հիմքը:

Երբ 1930 թվին ես մեկնեցի Մոսկվա՝ սովորելու Կինեմատոգրաֆիայի ինստիտուտում, Չարենցը կրկնակի քաջալերեց իմ քայլը— և բարձրագույն կրթության գնալը, և կինոն ընտրելը: Իր ծանոթ երիտասարդներից նրանց, ովքեր ցանկություն չունեին բարձրագույն կրթություն ստանալու, նա համարյա ստիպում էր մտնել համալսարան: Ես նրանց անունները չեմ ուզում տալ, որովհետև

նրանք այժմ ոչ միայն կրթված մարդիկ են, այլև մասնագետներ՝ ամեն մեկն իր բնագավառում, և վաղուց են մոռացել իրենց երբեմնի անբարյացակամությունը՝ սովորելու նկատմամբ:

Չարենցը հիմնալի տիրապետում էր ռուսերենին, և գիտեր գերմաներեն այնքան, որ ձեռնարկել էր թարգմանել Գյոթեի «Ֆաուստ»-ը բնագրից:

Ոչ թե պակաս, այլ ավելի լավ տիրապետում էր ռուսերենին Ակսել Բակունցը: Լեզուների տիրապետելը Չարենցը համարում էր մեր երիտասարդության առաջնահերթ խնդիրներից մեկը: Լեզուների, և այդ թվում, առաջին հերթին... հայերենին: Նա տանել չէր կարողանում մեր լեզվի նահատակումները, լինել դա անպաճույճ ոտանավորի մեջ թե առօրյա խոսակցության: Մանավանդ, գրվածքի մեջ:

Չարենցն ինքն օրինակ էր լավագույն երիտասարդի: Ծնված լինելով Կարսում, նա իր միջավայրի բերումով կարող էր դառնալ քաղքենի, մնալ անկիրթ և այլն: Սակայն նա համարյա թե ամբողջովին իրեն է պարտական, որ նրանից դուրս եկավ մեր մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցը: Նա ևս, պատանի հասակում, իր հասակակիցներից շատերի նման շատերի հետ խաղացել է, օրինակ, ազարտային «խումար» խաղը: Բայց նա «խումար»-ում տարած իր փոքրիկ գումարով մի անգամ վերցրել և... տպել է իր առաջին գրքույկը: Միմյուրիկ արարք.— «մի ծաղկից օձը թույն է պատրաստում, իսկ մեղուն մեղր»...

4

Ինչպես հայտնի է, Չարենցն ունի «Գյումրի» վերնագրով մի բանաստեղծություն: Հետամնաց քաղաքի մասին ցավով գրած բանաստեղծություն է դա: Այնտեղ, ի միջի այլոց, անվանվում է նաև «Ապոլո» կինո-թատրոնը:

Մի անգամ ես հարցրի Չարենցին.

— Ինչո՞ւ ես գրել «Ապոլո»: Այդպիսի անունով կինո-թատրոն մենք չենք ունեցել Գյումրիում: Կային «Էրատո», «Պրոգրես»... Երևի մոռացել ես:

— Ոչ, չեմ մոռացել,— պատասխանեց նա,— «Ապոլո» ավելի տիպիկ և հաճախ հանդիպող անուն էր այն ժամանակներում:

Չարենցի հետ ես հաճախ եմ խոսել իմ հարազատ քաղաքի մասին: Սակայն թե է՞րբ է նա առաջին անգամ եղել այնտեղ՝ այժմ չեմ կարող ասել: Իսկ ինչ վերաբերում է մեր ծանոթությունից հետո նրա այցելություններին, ես դրանք հիշում եմ մեկառմեկ:

Իր առաջին այցելությունն արտասահմանյան ճանապարհորդությունից հետո, նա կատարեց օգոստոսի առաջին կեսում: 1925 թվի հուլիսի 21-ին անցնելով Թբիլիսիից Երևան, նա կայարանում մեզ խոստացավ շուտով այցելել և հրապարակորեն պատմել իր ճանապարհորդության մասին: Ափսոս, որ այդ այցելության մասին ոչ մի հետք չի մնացել քաղաքում տպվող «Բանվոր» թերթի մեջ: Բայց նույն թվի վերջերին նա նորից եղավ Լենինականում, այս անգամ իմ և Մահարու հետ, որ արդեն փոխադրվել էինք Երևան: Դեկտեմբերի 20-ին նա զեկուցում տվեց, որի մասին թերթում տպված է ինֆորմացիա:

Քանի որ «Նոյեմբեր» միության կորիզը հանդիսացող Լենինականի բանվորա-գյուղացիական գրողների «Հոկտեմբեր» միության հիմնական անդամները արդեն փոխադրվել էին Երևան և

հավաքվել Չարենցի շուրջն անմիջականորեն, Չարենցն այնուհետև այլևս առիթ չունեցավ գրական-կազմակերպչական գործերով լինել Լենինականում: Բայց նրա կապը Լենինականի հետ դրանով ոչ սպառվում էր և ոչ սահմանափակվում:

Լինելով կարսեցի, այսինքն՝ մի քաղաքից, որի բնակիչները թե՛ աշխարհագրական ծագումով, թե՛ լեզվով, թե՛ կենցաղով ու սովորություններով շատ նման էին գյումրեցիներին, Չարենցը, իր ծննդավայրը կորցրած, Լենինականում առնում էր իր Կարսի կարոտը, իրեն զգում էր իր մանկության և պատանեկության միջավայրում:

Չարենցը և ես մեր երկարամյա սերտ բարեկամության ընթացքում հաճախ էինք կես-կատակ և կես-լուրջ խոսում իրար հետ գյումրվա բարբառով: Իսկ երբ ես նրան կարդացի իմ «Հեղնար աղբյուր»-ի առաջին էջերը, որտեղ գործածել էի հերոսների կիսաբարբառային և կիսագրական պայմանական լեզու, նա ինձ խորհուրդ տվեց լրիվ կերպով գործածել բարբառը, իհարկե, ազատելով թրքաբանություններից: Մի երկու էջի վրա ինքը կատարելով դա, ցույց տվեց, թե որքան լավ էր ստացվում այդպես: Եվ այդտեղ ես տեսա, որ նա հմուտ գիտեր մեր բարբառն ու դրա ոգին: Եվ որ ամենագարմանալին էր, չէր շփոթում այնքան մոտիկ կանգնած Կարսի բարբառի հետ:

Բայց մի թե միայն բարբառի ոգին: Իր սքանչելի «Էլեգիա՝ գրված Վենետիկում»-ի մեջ խոսելով «ծեր պոետի» մասին, որը, ինչպես հայտնի է, մեր մյուս անմահ վարպետն է՝ Ավետիք Իսահակյանը, Չարենցն ստեղծում է «Արփաչայի» և «հեռավոր Գյումրու» այնպիսի կոլորիտ ու զգացողություն, որպիսին հաճախ չի հաջողվում տալ մեծածավալ նկարագրությունների մեջ անգամ:

Չարենցը շատ բարձր էր գնահատում իր ժամանակին Ալեքսանդրապոլում ծնունդ առած գրական երիտասարդության փայլուն ներկայացուցիչներին՝ Հովհաննես և Արտաշես Տեր-Մարտիրոսյաններին, Իսահակ Իսահակյանին, Գևորգ Աֆրիկյանին, Արմենուհի Տիգրանյանին, որի հետ նա եղել էր անձամբ ծանոթ:

Չարենցը մեծ հարգանքով էր խոսում Գյումրվա ժողովրդական երգիչների, աշուղների, նվագածուների մասին: Մի անգամ, երբ պատանեական հպարտությամբ ասացի նրան, որ Գյումրվա «Վարդապետի բաղ» զբոսավայրի հիմնադիր և «Ճակատ անմահից» տրակտատի հեղինակ Ալեքսանդր վարդապետ Արարատյանն իմ տատի հորեղբայրն է եղել, նա իսկույն հիշեց և սկսեց արտասանել նրա հռչակավոր «Անի քաղաք նստե կուլա, չկա ըսող մի լա, մի լա» բանաստեղծությունը:

Լենինականցիների նկատմամբ Չարենցն ընդհանրապես ուներ «հատուկ» ջերմ վերաբերմունք, իսկ այդ թվում, երիտասարդ նկարիչ Շավարշ Հովհաննիսյանի նկատմամբ՝ կրկնակի ևս, քանի որ նա «հաճելի հիբրիդ» էր, Կարսեցի ծնողների զավակ և Գյումրիում ծնված:

Մայիսյան ապստամբությունը, որը, ինչպես հայտնի է, սկսվել էր Ալեքպոլում, Չարենցը հիշում էր հաճախ, մեծ ակնածանքով ու հարգանքով, և երագում էր, որ մեր գրական ամսագիրը կոչվեր «Մայիս»:

Համահայաստանյան և համաժողովրդական գրող, Չարենցը, հպարտությամբ կարող եմ նշել, իր հոգու խորքում մի առանձին տեղ ուներ Լենինականի համար՝ իր կորցրած Կարսի հարազատ եղբոր:

Թատրոնի կողքային ստվերոտ պատի տակ, պատին հենած դեկորներ— շքեղ պալատի սյուները՝ խարխուլ հյուղի ճակատի հետ, ստվերախիտ անտառի ծառերը՝ ժայռերի կույտի մոտ... Բուտաֆորիական պահարաններ, նկարված հայելիներ, անկայուն նյութերից իրար կցմցված արքայական գահ...

Իսկ թատրոնի ճակատային պատի դիմաց, այգու նստարանների վրա նստոտած և մոտիկ կանգնոտած անձանոթ և արտակարգ մարդիկ, որոնց լուսանկարները ես հետագայում տեսնելու եմ հայ թատրոնի պատմությանը նվիրված բոլոր գրքերում:

Այդ նրանք են, որ երեկ երեկոյան, այսօր երեկոյան և վաղը երեկոյան, մեր պրովինցիալ փոքրիկ քաղաքի լճացած անհետաքրքիր կյանքի մեջ կյանքի են կոչել և կյանքի են կոչելու ուրիշ կյանքեր՝ այսօրվա, բայց այլ աշխարհների, մեր աշխարհի, բայց դրա պատմական անցյալի... Այդ նրանք են, որ կենդանություն են տվել ու պիտի տան թատրոնի ստվերոտ պատի տակ դարսոտված դեկորներին ու բուտաֆորիային, որպեսզի իրար կցկցված տախտակների խարխուլ սարքը դառնա հաստատուն գահ, իսկ կապույտ ու սպիտակ ներկերով նկարված հայելին իր մեջ արտացոլի կյանքում սովորական կին, բայց բեմի վրա գեղեցկուհի ահա այս նստածին...

Շրջիկ թատերախմբի անդամներ, նրանք սովորական տոնով հանգիստ գրուցում են այնպիսի քաղաքների և երկրների մասին, որոնց լոկ թվարկումից անգամ պտտվում է իմ պատանեկան երազկոտ գլուխը: Այն ամենը, ինչ ինձ համար լեզենդ է անհասանելի, նրանց համար կյանք է առօրյա: Բայց դրա հետևանքով ոչ թե լեզենդն է դադարում լեզենդ լինելուց, այլ, ընդհակառակը, նստարանների վրա նստոտած և մոտիկ կանգնոտած այդ իրական մարդիկ են վերածվում լեզենդների:

Նրանք խոսում են Պոլսի մասին, որտեղ եղել են, և Թավրիզի մասին, որտեղ լինելու են: Բայց ինչո՞ւ Թավրիզ և Պոլիս, երբ Թիֆլիսն անգամ, որի մասին ես այնքան շատ եմ լսել իմ մանկությունից ի վեր, Թիֆլիսն անգամ, որը գտնվում է իմ Ալեքսանդրապոլի համարյա կողքին, անհասանելի լեզենդ է ինձ համար: Նույնիսկ ավելի մեծ և տանջալիորեն ձգող լեզենդ, քանի որ այդքան մոտիկ է, բայց դարձյալ անհասանելի... Իմ ընտանիքի շատ ազգականներ եղել են և լինում են այնտեղ, մեր տանը պատմում են դրա մասին կամ չեն էլ պատմում, այլ հասարակ կերպով հաղորդում են, իսկ ես միայն լսում եմ և չեմ կարողանում տեսնել, կարծես կույր լինեմ՝ տեսողության տեր մարդկանց շրջապատի մեջ ընկած...

Ես դեռ «մի մատ լակոտ» եմ, բայց շատ եմ կարդացել, այնքա՛ն շատ: «Գ. Սունդուկյան—Խաթաբալա»— գրված է իմ գրքերից մեկի վրա: «Գ. Սունդուկյան—Խաթաբալա»— գրված է շրջիկ թատերախմբի աֆիշաներից մեկի վրա: Եվ այնքա՛ն ցավալի է, որ ես ստիպված եմ միայն կարդալ գիրքը և աղքատիկ քաղաքից բացի ոչինչ չտեսածի իմ անօգնական երևակայությամբ մի կերպ պատկերացնել «Խաթաբալայի» Թիֆլիսը, մինչդեռ երեկ երեկոյան, այսօր երեկոյան և վաղը երեկոյան բեմի վրա ապրել է և ապրելու է կենդանի Թիֆլիսը, և դահլիճում նստած հարյուրավոր մարդիկ տեսել են կամ տեսնելու են այն...

Իսկ ես շատ փոքր եմ՝ թատրոն գնալու համար, և եթե փոքր էլ չլինեի՝ շատ փոքր է իմ հոր աշխատավարձը՝ ինձ այդպիսի շոայություն ընձեռնելու համար...

Իմ ուշադրությունը գրավում է դեպի թատրոն քայլող մի հաղթանդամ մարդ՝ կյաժ մազերով ու պեպենոտ կարմիր դեմքով: Ինձ թվում է, թե նա իմ ուշադրությունը գրավում է հենց իր արտաքին արտաքինի պատճառով: Ես դեռ չգիտեմ, որ նա մարդկանց ուշադրությունը, նաև իմ

ուշադրությունը, գրավում է իր ներսից ճառագող տաղանդի փայլով: Որովհետև այդպես է տաղանդի ուժը՝ գրավել մարդկանց ուշադրությունը:

Երեկոյան, տանը, սեղանի մոտ նստած, «ուր զծանոց» նավթի լամպի լույսի տակ, ես պատմում եմ պեպեճնոտ, կյաժ մարդու մասին: Հայրս, «մանուֆակտուրայի մագազինի» գործակատար, ասում է հանգիստ.

— Օնիկն է: Ես ու նա միասին կոշկակարի աշակերտներ ենք եղել: Նա շուտ-շուտ փախչում էր աշխատանքից, որ գնար թատրոն, ներկա լիներ փորձերին, գոնե տեսներ դերասաններին: Մեր ուստան կողպեքով փակում էր դուռը մեզ վրա, իսկ նա լուսամուտից էր դուրս ցատկում ու փախչում:

Եվ ես հարգանքով եմ նայում իմ հորը, քանի որ այդ կյաժ մարդը բոլորի համար մեծատաղանդ ու հռչակավոր դերասան Հովհաննես Զարիֆյան է, իսկ իմ հոր համար՝ իր ընկեր Օնիկը...

Ոչ, ես անկարող եմ հաշվել, թե ինչով և ինչքան եմ պարտական Ալեքսանդրապոլի-Ալեքսպոլի-Լենինականի թատրոնին իմ զարգացմամբ, ճաշակով, պարզապես իմ դաստիարակությամբ: Առավել ևս անհնար է հաշվել, թե ինչով և ինչքան է պարտական իմ ամբողջ քաղաքը, իմ Գյումրին, նրա բոլոր մարդիկ:

«Բանաստեղծների և գուսանների քաղաք»,— կոչվել և կոչվում է իմ քաղաքը: Բայց այնտեղ բանաստեղծներ և գուսաններ եղել են ոչ միայն Ավետիք Իսահակյանն ու Աշուղ Զիվանին, Շուշանիկ Կուրդիկյանն ու Գրիգոր Շերամբ, այլև Իսահակյանն ու ընդհանրապես բոլորը, ամբողջ քաղաքը: Շերամբ միայն խտացումներն ու թանձրացումներն էին այդ համատարած բանաստեղծականության և գուսանականության:

Մեր թատրոնն իր ռոմանտիկայով ոչ միայն սնել է մեր քաղաքը, այլև սնվել է նրանից: Այդ առթիվ ժողովուրդն ասում է՝ «Խուփը գլորվեց, գտավ իր պուտուկը»...

Ապրիլ կյանքում հարյուր տարի, սովորիք հարյուր տարի, զարգացիք, տես նորանոր քաղաքներ ու աշխարհներ, ճանաչիք նորանոր ապրումներ, միևնույն է, պատանեական դաստիարակությունն ու հուշը, մինչև իսկ թռուցիկ տպավորությունը, ընդմիջտ կմնան հոգուդ մեջ դրոշմված ոչ թե որպես մեռած ներկ, այլ կենդանի լույս, որն իր երանգն է հաղորդել և հաղորդում քո ամբողջ հետագա կյանքին...

Այսպես, ես Շեքսպիրին պատկերացնելիս միշտ տեսնում եմ նրան իմ գլխից շատ բարձր, երկնքում: Եվ դա ոչ միայն նրա համար, որ նա հանճար է հանճարների մեջ, այլև որ ես իմ մանկությունից ի վեր նրա նկարը տեսել եմ իմ քաղաքի թատրոնի առաստաղի վրա, չորս անկյուններից մեկում, ուրիշ երեք մեծ թատերագիրների հետ մեկտեղ: 1924 թիվն է, ես դեռ չեմ բոլորել իմ տասնութ տարին: Գաստրոլներով Լենինական է եկել Երևանի պետական թատրոնը: Փափագյան, Արուս Ոսկանյան... Ջանան... Միքայել Մանվելյան... Ես թվարկում եմ արվեստի պատմություն դարձած այս անունները, և այնքան մոտիկից իմ տեսած իրականությունը դառնում է լեզենդ...

Ես նրանց տեսնում եմ ոչ միայն բեմի վրա, այլև կուլիսների ետևում, որտեղ մուտք ունեն հիպոստված պատանու անկապտելի իրավունքով: Եվ ինձ ոչ ոք չի վճռում այնտեղից— երևի իրենք էլ այդպես են սկսել իրենց ճանապարհն արվեստի մեջ և այժմ զգուշանում են մեռցնել իմ մեջ, ով գիտե, ապագայի մեծ դերասանին...

Ո՞վ է ասում, թե ռոմանտիկան ու պոեզիան միայն բեմի վրա է, իսկ կուլիսների ետևում հոգսերն են և կյանքի պրոզան: Հրաշքի նման չէ՞ր արդյոք, երբ աչքերիս առաջ ինձ այնքան ծանոթ Ջանանը վերածվում էր Շեյլոկի, և դա ոչ միայն հագուստով ու գրիմով, այլև, ամենից առաջ, ներքնապես: Ես այլևս կարկամում էի, չէի կարողանում խոսել նրա հետ, որովհետև նա այլևս նա չէր, մենք երևի չէինք էլ հասկանա իրար լեզու...

Մի անգամ Ջանանի գուգասենյակը մտավ դերասան, բայց և գեղարվեստական դեկավար Փափազյանը և... Բայց արդյո՞ք Փափազյանը: Ներս մտավ միջին դարերի փառահեղ մի արքա՝ մեծափառ շարժումով բաց անելով դուռը: Հանդիսավոր դիրքով կանգնելով շեմքին, նա հրամայաբար ասաց բեմ դուրս գալու պատրաստ, բայց չգիտես ինչից վշտացած ու վիրավորված և հրաժարվողի դիրք ընդունած Ջանանին.

— Ջանան, պիտի խաղաս:

— Չի պիտի խաղամ,— նյարդայնորեն բացականչեց հաղթանդամ երեխան:

— Ջանան, պիտի խաղաս,— արքայական անդրդվելիությամբ կրկնեց Փափազյանը:

— Չի պիտի խաղամ,— հիստերիկ բղավեց Ջանանը և սկսեց պոկոտել իր մազերը. ոչ թե պարիկի, այլ սեփական:

Իսկ քիչ հետո ամբողջ դահլիճը թուլանում էր ծիծաղից՝ դիտելով Ջանանի անգուգական խաղը: Այդպիսով, «չի պիտի խաղամ»՝ նշանակում էր «պիտի խաղամ», և այն էլ ի՞նչպես...

Եթե ես մինչ այդ էլ չպաշտեի դերասանական արվեստը, ապա կպաշտեի այդ պահից: Եվ դերասանի ինքնատիրապետությունը, կերպարանափոխվելու անբացատրելի կախարդությունը:

Վախենում եմ մտածել անգամ, թե ինչպիսի հոգեկան գանձեր կորցրած կլինեի և ինչպիսի թերի մարդ կդառնայի ես հետագայում, եթե այն ժամանակ չդիտեի և նորից ու նորից չդիտեի Հաուպտմանի «Ջրասույզ գանգը» հեքիաթ-դրաման, որտեղ Փափազյանը Հայնրիխն էր, Արուս Ոսկանյանը՝ Ռաուտենդլայնը, իսկ Միքայել Մանվելյանը՝ Նիկել մանը: Եվ եթե ես, դեռ նոր արբունքի հասած պատանի, դուրս եկա ոչ թե արկածից արկածի շտապող երիտասարդ, այլ հավիտենական սիրահար, շնորհիվ այն բանի չէ՞ր, որ բեմի վրա տեսա սիրո հավերժ պատկերը՝ Վահրամի և Արուսի տաղանդներով հեքիաթայնացած...

Ոչ, հողն ամեն տեղ հող է և ջուրը ջուր, և աշխարհագրական այդ տարրական գործոններն անկարող են բանաստեղծական և ռոմանտիկ դարձնել մարդկանց: Դրա համար երևի հարկավոր է, որ մարդն ապրի պրովինցիալ փոքրիկ քաղաքում, երազի մեծ աշխարհի, մեծ կյանքի մասին: Եվ դրա համար երևի հարկավոր է նաև, որ ժամանակ առ ժամանակ նրան գավառական լճացած կյանքը խռովելու գան և անցնեն արվեստի թափառաշրջիկ գնչուները՝ պոլսեցիներ Փափազյանի ու Ոսկանյանի և Ջարիֆյան դարձած գյումրեցի Օնիկի հետ...